ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

«06» նոյեմբերի 2019 թվականի N 14-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Սահմանել.

1) Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործունեության ոլորտում հանրությունից ստացվող բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի

2) Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի բարձր աստիճան համարվող դեպքերը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

13.11.2019

X

VERIFIED OCSP 13.11.2019 14:45:59 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հավելված N 1
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2019 թվականի N -Լ որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) գործունեության ոլորտում հանրությունից ստացվող բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) Հանրություն՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք.

2) Բողոքների առձեռն ներկայացում՝ բողոքների ներկայացում Տեսչական մարմնի՝ փաստաթղթաշրջանառության համար պատասխանատու ստորաբաժանում, ինչպես նաև Տեսչական մարմնի տարածքային կենտրոններ՝ համապատասխան աշխատողին հանձնելու միջոցով.

3) Տեսչական մարմնի էլեկտրոնային փոստ՝ Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով հաստատված և Տեսչական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված էլեկտրոնային փոստ:

II. ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3. Տեսչական մարմինը հանրությունից ընդունում և քննության է առնում տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված բողոքները:

4. Բողոքները կարող են ներկայացվել.

1) առձեռն.

2) փոստով.

3) էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստով կամ պաշտոնական կայքէջում առցանց դիմում լրացնելով):

5. Բողոքները կարող են փոխանցվել նաև այլ պետական մարմիններից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով:

6. Բողոքը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

1) բողոքողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը.

2) բողոքողի հասցեն, (իրավաբանական անձի գտնվելու վայրը).

3) բողոքողի հետադարձ կապի միջոցը (էլեկտրոնային փոստ կամ հեռախոսահամար),

4) մարմնի անվանումը, որին ներկայացվում է բողոքը,

5) ներկայացվող պահանջը (բողոքի առարկա),

6) կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են),

7) բողոքը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը,

8) բողոքողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը:

9) ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները:

7. Տեսչական մարմնում կազմակերպվող անձանց ընդունելության ժամանակ սահմանված կարգով կարող է կազմվել արձանագրություն՝ սույն կարգի 6-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերի նշմամբ, որը սույն կարգի 6-րդ կետի իմաստով, համարվում է անձի կողմից ներկայացված բողոք:

8. Բողոքի ներկայացման համար պետական կամ տեղական տուրք չի գանձվում:

9. Սույն կարգի 6-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը չներկայացնելը հիմք չէ բողոքը անհետևանք թողնելու համար: Տեսչական մարմինը պարտավոր է միջոցներ ձեռնարկել բողոքողի հասցեն կամ հետադարձ կապի միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը բողոքողից ստանալու ուղղությամբ՝ Տեսչական մարմնի արագ գործելու պարտականությունը ապահովելու նպատակով:

10. Եթե բողոքում առկա են ձևական սխալներ կամ բացթողումներ, որոնք կարող են շտկվել, ապա Տեսչական մարմինը 1 աշխատանքային օրվա ժամկետում դրանք մատնացույց է անում բողոք բերող անձին՝ նրան հնարավորություն ընձեռելով եռօրյա ժամկետում շտկելու այդ սխալները կամ բացթողումները:

11. Սույն կարգի 6-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը չներկայացնելը հիմք չէ դիմումը անհետևանք թողնելու համար: Տեսչական մարմինը պարտավոր է միջոցներ ձեռնարկել անձը հաստատող փաստաթղթի տվյալները բողոքողից ստանալու ուղղությամբ՝ բողոքի հավաստիությունը պարզելու նպատակով:

12. Եթե բողոքով ներկայցվող հարցը չի մտնում Տեսչական մարմնի իրավասությունների շրջանակի մեջ կամ ներկայացված հարցերից մեկը կամ մի քանիսը ենթակա են այլ վարչական մարմնի իրավասությանը, ապա դրան ընթացք է տրվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված կարգով:

13. Բողոքի՝ Տեսչական մարմնին վերաբերող մասով տրվում է համապատասխան ընթացք, որի մասին բողոքողը եռօրյա ժամկետում տեղեկացվում է:

14. Հանրության կողմից տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ բողոքների ներկայացումը հիմք չէ ըստ անհրաժեշտության ստուգումներ անցկացնելու համար՝ առանց հետագա դիտարկման:

15. Անանուն և կեղծ բողոքներին ընթացք չի տրվում:

16. Եթե Տեսչական մարմին ստացված բողոքը պարունակում է տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված տվյալներ՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնալու մասին տեղեկություններ (փաստեր), ապա տեսչական մարմնի ղեկավարը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր ստուգում

իրականացնելու մասին: Ստուգում անցկացնելու մասին հրամանը կամ հանձնարարագիրը ընդունվում է սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ քան բողոքը տեսչական մարմին մուտքագրելու օրվանից 3 օրվա ընթացքում: Ստուգում իրականացնելու մասին տեսչական մարմինը տեղեկացնում է բողոքողին՝ հրամանը կամ հանձնարարագիրը ընդունելուց հետո 3 օրյա ժամկետում:

Բացառիկ դեպքերում՝ երբ Տեսչական մարմնի կողմից բողոքին անհապաղ չարձագանքելը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, Տեսչական մարմնի ղեկավարը արձակում է հրաման զննում իրականացնելու մասին: Զննում իրականացման արդյունքների մասին տեղեկացվում է բողոքողը և տնտեսավարող սուբյեկտը:

17. Սույն կարգի 16-րդ կետով սահմանված ստուգումը իրականացվում է, երբ.

1) անձանց կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգի աստիճանը բարձր է, կամ.

2) նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացվել են բազմաթիվ բողոքներ:

18. Նույն տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ կարճ ժամանակահատվածում ստացված բազմաթիվ բողոքներ են համարվում, բողոքը մուտքագրվելու օրվան նախորդող 60 օրվա ընթացքում 2 կամ ավելի բողոքները:

19. Այն դեպքում, երբ Տեսչական մարմին ստացված բողոքում առկա չեն սույն կարգի 17-րդ կետով նշված հանգամանքները, ապա Տեսչական մարմինը բողոքին ընթացք է տալիս՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հաշվի առնելով սույն կարգի 3-րդ գլխով սահմանված առանձնահատկությունները:

20. Տնտեսավարող սուբյեկտների գործունեության հետ կապված բողոքների արդյուքները վերլուծվում են Տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության կողմից՝ տնտեսավարող սույբեկտների անհատական ռիսկերը գնահատելու, ինչպես նաև տնտեսավարող սույբեկտների ռիսկանության աստիճան որոշելու նպատակով:

III. ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

21. Բողոքի հիման վրա հարուցվող վարչական վարույթի ընթացքում գործողությունները իրականացվում են բացառապես դիմումով բարձրացված հարցերի շրջանակներում:

22. Հանրությունից ստացված բողոքի ընթացքն ապահովելու համար Տեսչական մարմնում ուսումնասիրվում է դիմումի բովանդակությունը և Տեսչական մարմնին բողոքով բարձրացված հարցի իրավասության մեջ լինելու դեպքում եռօրյա ժամկետում վարույթի մասնակիցներին (բողոքողին և վարչական ակտի հասցեատիրոջը) ծանուցվում է վարչական վարույթի հարուցման մասին:

23. Ծանուցմամբ նաև նշվում է Տեսչական մարմնում լսում իրականացնելու մասին՝ նշելով լսում անցկացնելու տեղը, օրը և ժամը:

24. Անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել մեկից ավելի լսումներ:

25. Լսման արդյունքում բողոքով բարձրացված հարցերի վերաբերյալ որոշակի փաստական հանգամանքներ պարզելու նպատակով կարող է որոշում կայացվել զննում իրականացնելու մասին:

26. Զննում իրականացնելու մասին հրամանը 3 աշխատանքային օրյա ժամկետում առձեռն կամ փոստով ծանուցվում է վարույթի մասնակիցներին:

27. Անցկացվող լման կամ զննման ժամանակ Տեսչական մարմնի կողմից վարչական վարույթի մասնակիցներին տրամադրվում է անվճար խորհրդատվություն և այլ մեթոդական աջակցություն բողոքով բարձրացված հարցերի վերաբերյալ՝ օգնելով վերջիններիս հասկանալ, թե օրենսդրությամբ նախատեսված ինչ պահանջների պետք է համապատասխանի և ինչ միջոցներ պետք է ձեռնարկվի համապատասխան գործունեությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանեցնելու համար.

28. Սույն կարգի 27-րդ կետով նախատեսված տեղեկացումը զննման ժամանակ իրականացվելու դեպքում լրացվում է խորհրդատվական թերթիկ (Ձև N 1):

29. Խորհրդատվական թերթիկը ստորագրում են զննում իրականացնող մասնագետը և տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչը, իսկ զննումից հետո կազմվելու դեպքում այն առձեռն կամ փոստով հանձնվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցչին:

30. Հանրությունից ստացված այն բողոքները, որոնք վերաբերում են քաղաքացիներին՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումների վերաբերյալ, Տեսչական մարմնի կողմից քննվում են համաձայն սույն կարգի:

Հավելված N 2
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2019 թվականի « » N -Լ որոշման

ՑԱՆԿ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆՁԱՆՑ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳԻ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐԻ

1. Դեղերի շրջանառության ոլորտ.

1) դեղի արտադրանքի մակնշման և բաղադրակազմի փաստացի տվյալները չեն համապատասխանում

2) հայտնաբերվել է դեղի կեղծման դեպք,

3) համապատասխանում են արտադրանքի մակնշման և փաստացի տվյալները՝ բացառությամբ դեղաչափի

4) ներարկման կամ ակնաբուժական ստերիլ դեղը ենթարկվել է աղտոտման՝ մանրէներով,

5) արտադրանքը ենթարկվել է քիմիական աղտոտման,

6) տեղի է ունեցել որոշ արտադրանքների փաթեթների շփոթմունք,

7) բազմաբաղադրատարր արտադրանքում առկա է հաստատված բաղադրակազմին չհամապատասխանող մեկ կամ մի քանի այլ ակտիվ նյութ,

8) արձանագրվել են ծայրահեղ վնասակար (հրահանգում չնկարագրված) կողմնակի ազդեցության (մահվան, կյանքին սպառնացող, հոսպիտալացում պահանջող, անգործունակություն, ֆիզիկական խեղում կամ բնածին արատ առաջացնող) դեպքեր.

2. Բժշկական սպասարկման ոլորտ.

1) Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում.

ա. արյունը և դրա բաղադրամասը վերցնելու ընթացակարգի պահանջների խախտումներ,

բ. արյան պարտադիր հետազոտությունների իրականացման կարգի խախտումներ,

գ. արյան կամ դրա բաղադրամասերի պահպանման, տեղափոխման, արտահանման, և ներմուծման խախտումներ,

դ. արյան և դրա բաղադրամասերի փոխներարկման իրականացման խախտումներ:

2) Հոգեբուժական բժշկական օգնության շրջանակներում.

ա. հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքների իրականացման պահանջների պահպանման խախտումներ,

բ. հոսպիտալացման, ներառյալ ոչ հոժարակամ բուժման և դուրսգրման կարգի խախտումներ:

3) Մարդու օրգաններ և/կամ հյուսվածքներ փոխպատվաստելու դեպքում մարդու օրգանների և հյուսվածքների արգելված գովազդը:

4) Մարդու իմունային անբավարարության վիրուսի հայտնաբերման նպատակով պարտադիր բժշկական խորհրդատվություն, պարտադիր հետազոտություններ չիրականացնելը՝ ռիսկի խմբի պացիենտների մոտ, վիրահատական միջամտություններից առաջ, ծննդօգնության և այլն:

3. Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ.

1) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների սանիտարահիգիենիկ պահանջները չպահպանելը.

2) ջրի աղտոտվածություն.

3) լողավազանների և բաղնիքների սանիտարահիգիենիկ պահանջները չպահպանելը.

4) գեղեցկության սրահների սանիտարահիգիենիկ պահանջները չպահպանելը.

5) նախադպրոցական և դպրոցական ուսումնական հաստատությունների սանիտարահիգիենիկ պահանջները չպահպանելը.

6) հյուրանոցների սանիտարահիգիենիկ պահանջները չպահպանելը.

7) վարակիչ հիվանդության (հեպատիտ Բ, Ց) դեպքը (դեպքերը).

8) իմունականխարգելման գործընթացի խախտումները:

4. Աշխատողների առողջության և անվտանգության ապահովման ոլորտ.

1) աշխատողը չի ծանոթացել աշխատանքի անվտանգ կատարման կանոններին.

2) առաջացել է աշխատանքի միջոցի անսարքություն կամ վթարային վիճակ.

3) աշխատանքը կատարվում է սահմանված տեխնոլոգիական կանոնակարգի խախտումներով.

4) աշխատողները ապահովված չեն կոլեկտիվ և (կամ) անհատական պաշտպանության միջոցներով.

5) աշխատավայրը վտանգավոր կամ վնասակար է կյանքի և առողջության համար.

6) աշխատանքի վայրում տեղի ունեցած մահացու կամ ծանր ելքով արտադրական դժբախտ դեպքեր.

7) մասնագիտական հիվանդության (թունավորման) վերաբերյալ ահազանգ.

8) մինչև 18 տարեկան անձանց, ինչպես նաև հղի կամ երեխային կրծքով կերակրող կանանց և երեխա խնամող աշխատողների համար օրենսդրությամբ սահմանված երաշխիքների չպահպանում.

9) արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողների պարբերական բժշկական զննության չենթարկելը:

Ձև 1

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿ

_____ «____»_____ 20 թ.
կազմելու վայրը

Մենք՝ _____
նշվում է խորհրդատվություն տրամադրող մասնագետների պաշտոնը, անունը, ազգանունը
_____
_____

հաշվի առնելով_____
նշվում է ուսումնասիրության որոշումը (հրամանը) արձակող պաշտոնատար անձի պաշտոնը, որոշման (հրամանի) տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, համարը
_____

հիման վրա _____
_____
նշվում է տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը (հասցեն), ՀՎՀՀ
_____-ում

իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված «____»_____20 թ. ուսումնասիրության արձանագրությունը, տրամադրեցինք հետևյալ խորհրդատվությունը.

1) _____
_____

2) _____
_____

3) _____
_____

Խորհրդատվություն տրամադրողներ՝ _____ _____
ստորագրություն *անուն, ազգանուն*

_____ _____
ստորագրություն *անուն, ազգանուն*

Տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչ՝ _____ _____
ստորագրություն *անուն, ազգանուն*

_____
պաշտոն